





ահա անոնց կհարցնի, թե ինչո՞ւ կվիճաբանին: Անոնք կըսեն. «Դու ես միակ այն մարդը Երուսաղեմում, որ լուր չունիս, թե վերջին օրերուն ինչ պատահեցավ այնտեղ. ինչպես Հիսուս մատնվեցավ, ինչպես չարչարվեցավ, ինչպես խաչ բարձրացավ»: Եվ ըսին, թե կըսվի, որոշ կիներ գացած են գերեզման և չեն գտած զայն այնտեղ, և լսած են ձայնեն, որ ըսած էր իրենց. «Չէ աստ այլ հարեալ»: Այն ատեն Հիսուս դարձավ իր երկու հետևորդներուն և ըսավ. «Ինչո՞ւ այսքան թերահավատ եք և տկար, չե՞ք գիտեր, թե մարգարեներն արդեն գուշակած էին, որ այդպես պետք է պատահեր»: Եվ կըսե Ավետարանը. «Հիսուս սկսավ Ս. Գիրքեն մեջբերումներ ընել, բացատրելու համար իրենց, ինչ որ պատահած էր, պետք է որ պատահեր»: Սակայն այդ երկու աշակերտները դարձյալ չհասկցան, թե Հիսուս էր իրենց հետ խոսողը: Եվ գացին Մատու, իրենց տան մեջ նստեցան սեղանի շուրջ: Այնտեղ իրենց անձանոթ մնացած այդ մարդն առավ հացը, բեկանեց և իրենց տվավ ուտելու: Եվ կըսե Ավետարանը. «Այն ատեն միայն բացվեցան իրենց աչքերը և տեսան, որ Հիսուսն էր: Եվ ճիշտ այն ատեն, երբ ճամփան էին, ան անհետացավ իրենց աչքերեն»:

Այս պատմումը մեծապես նշանակալից է այսօր մեզի համար, որովհետև ըսել կուզե մեզի, թե Հիսուսի ներկայությունը չենք զգար նույնիսկ, եթե գիտենք անոր մասին և լսած ենք անոր Ծնունդի, Խաչելության և Հարության մասին: Թե Հիսուս չի քալեր մեր քովեն, և չենք ճանչնար զայն, նույնիսկ եթե երթանք Ս. Գիրքին և այնտեղ բացատրություններ փնտրենք: Այլ կճանչնանք զայն, ու կհայտնվի ան մեզ ի բեկանել հացին: Այսինքն երբ Սեղան կնստինք իրեն հետ, այսինքն ուրիշ խոսքով Հաղորդությամբ զինքը կստանանք մեր մեջ:

Պենտեկոստեի այս օրը նույն բանն էր, որ պատահեցավ Վերնատան մեջ: Սակայն այս անգամ Հիսուս այլևս իր դիմագիծով չներկայացավ իր աշակերտներուն, որովհետև վերջացած էր անոր կյանքին մեջ այն մասը, երբ իրենք աշակերտներ էին, այսինքն կվարժվեին, կուսանեին, ճշմարտության դեմ հանդիման կբերվեին: Սակայն դարձյալ ամբողջությամբ չէին ըմբռներ Հիսուսի իրականությունը: Պետք էր աստվածային նոր հայտնությամբ մը անոնց մեջ իջներ Աստուծո Հոգին: Ոչ թե Հիսուսի ներկայությամբ իրենց հետն ըլլար, իրենց հետը քալեր, իրենց հետը ճաշեր, այլ պետք էր, որ իրենց մեջը, իրենց ներսը մտներ՝ զանոնք ընելու համար բնակարանը աստվածային Հոգիին և զգացնել տալու համար անոնց, թե Աստված մարդու մեջ կվերակենդանանա և այդ մարդը հաղորդակից կդառնա Ս. Հոգիին:

Սիրելի հավատացյալներ, այս էջերը մեկ անգամ ևս ուզեցի պարզել և հանձնել ձեր ուշադրության, որովհետև այդ Պենտեկոստեի օրը հիմնված Եկեղեցիներից մին այս Եկեղեցին է՝ մեր Հայոց Առաքելական Եկեղեցին:

Առաքյալները, երբ աշակերտներե փոխակերպվեցան առաքյալներու, անոնք մեկ պատգամ ունեին միայն ամբողջ մարդկության, թե Հիսուս Հարություն առած է մեռելներեն: Եվ Աստված տվավ անոնց այդ ուժը քարոզելու, որպեսզի այդ ճշմարտությունը հայտնեն ամբողջ աշխարհին: Եվ այդ էր, որ շարունակեց վարդապետել Եկեղեցին, հայտնել մարդոց այդ իրողությունը, թե Հիսուս Աստուծո Որդին մեր մեղաց համար խաչվեցավ, հարություն առավ և մեզի անմահականության կյանքը տվավ այն Սեղանեն, որ հաղորդության Սեղանն է Եկեղեցին: Որովհետև Եկեղեցի ուրիշ բան չէ, եթե ոչ մեծ սեղան մը, որուն կհրավիրվի ամեն հավատացյալ հաղոր-



դակից դառնալու Քրիստոսի, և բնակարան դառնալու Ս. Հոգիին: Այդ կատարած է Հայոց Եկեղեցին: Հրավեր մը եղած է այն միշտ հայ ժողովուրդին, որ գան այնտեղ հաղորդվելու համար Հիսուսի արյան և մարմնի հետ, նաև իրենց նահատակներու արյան: Գան և հաղորդակից դառնան իրենց անցյալին: Գան, զգան այնտեղ, թե Եկեղեցին ներս է, որ կշարունակվի հայոց պետությունը, գան և ներշնչվին անոր հայրենասիրական պատգամներով, զգան, թե այս Եկեղեցին հիմնված է սրբազան այն հողին վրա, որ մեր հայրերու հողն է, ոչ միայն գերեզմանը անոնց, այլ նաև հույսի կանթեղը՝ կախված անոր լեռներու բարձունքներուն:

Այսօր, սիրելի հավատացյալներ, երբ եկած եք դարձյալ հաղորդվելու մեր Ս. Եկեղեցիի խորհուրդով, լավ պիտի զգաք, թե Հայաստանյայց Եկեղեցին շարունակությունն է այն Պենտեկոստեի օրվան, որ Աստված հրեղեն լեզվի ձևով իջավ առաքյալներու սրտերու մեջ: Պետք է հասկնանք, թե այդ լեզուն շարունակեցավ իջնել շարունակ, ամեն անգամ, երբ պատարագ մատուցվեցավ սրբազան այս տաճարին մեջ, ամեն անգամ, որ ս. պատարագ մատուցվեցավ մեր Հայ Եկեղեցիի մեջ: Եվ հայ հավատացյալը մոտեցավ այդ սեղանին՝ հացի հետ հաղորդվելու այդ մեծ խորհուրդին, որ մեր Եկեղեցվո անմահության խորհուրդն է:

Մենք կհավատանք Հիսուսի խոստումին, թե դժոխքի դռները չպիտի կարողանան սասանեցնել իր իսկ հիմնած տաճարը: Որքան ատեն որ մեզմե յուրաքանչյուրն ալ ընդունեց Ս. Հոգիին հաղորդությունը, կդառնա տաճար անոր ներկայության: Մանավանդ այս առավոտ առանց հուզումի չէ, որ փառք կուտանք Աստուծո, որ, հակառակ մեր պատմության բոլոր ցնցումներուն, ալեկոծություններուն և դժվարություններուն, կանգուն է մեր հավատքի այս մեծ Խորանը՝ լուսո այս տաճարը՝ Ս. Էջմիածնի Կաթողիկեն, կանգուն է այն ոչ միայն կամարներով, քարերով, գմբեթներով և խաչերով, այլ կանգուն է ան դեռ և պերճախոս կերպով պատգամում է այնտեղ նույն հոգիով լեցուն այն լեզուն, որ մեր դժվարության այս օրերուն եղավ մխիթարության պատգամ, մեր տարակույսներու օրերուն եղավ համոզիչ ճշմարտության պատգամ, մեր մոլորանքի օրերուն եղավ իմաստության պատգամը, և մեր պայքարի օրերուն եղավ մեր վեհության և քաջության պատգամը:

Սրբազան մեր Հայրապետի լեզուն է ան, որ անխոնջ և բոլորանվեր ներշնչիչ իր խոսքով լեցուց մեր հոգիները և ըրավ այս տաճարը վերնատունը մեր հավատքին:

Այսօր, երբ կհիշենք երկու հազար տարիներ առաջ Պենտեկոստեի օրը, չենք կրնար չաղոթել առ Տերն Աստված, որ այս մեր Ս. Վերնատունը մնա կանգուն, և այնտեղ արձագանքե երկար և երկար տարիներ Սրբազան մեր Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագուն Կաթողիկոսի խոսքը, որ կյանք է մեզի համար, ներշնչում է մեզի համար, ուղղություն է մեր ժողովուրդին համար և պարծանք է մեր հայրենիքի համար:

Աղոթենք առ Աստված մանավանդ այսօր, որ մեր բարձր լեռներուն վրա կովող քաջերուն սուրբ բնավ չտկարանա, որովհետև կհավատանք, թե անոնց սիրտը իր պատգամն ստացած է այս Ս. Տաճարեն, և անոնք շարունակողներն են այն մեծ ու փառավոր գնացքին, որ բերավ մեզի և պարունակողներն են այն մեծ ու փառավոր գնացքին, որ մեր այս երկիրը հեռու հեց մեզի մեր հողին մինչև այսօր: Աղոթենք, որ մեր այս երկիրը հեռու մնա նոր ցնցումներե, տիրե այստեղ խաղաղություն: Աստված տա մեր ժողովուրդին ապահովություն, Աստված տա մեր ժողովուրդին համբերու-



թյուն և հույս, Աստված ավելի ուժեղացնե մեր հավատքը, և զգանք, թե մենք այս օրերուն ամենամեծ առաքելություն ունինք կատարելիք՝ շարունակել այդ ուխտը, որ մեր հայրերն ըրած են Աստուծո հետ, և պիտի ըլլանք Աստուծո ժողովուրդը և ինք պիտի ըլլա մեր Աստված:

Աստված օրհնե ձեզ և դուք մեզի հետ փառավորեք Անոր անունը հավիտյանս հավիտենից. ամեն:

